ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ձևավորված ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-17/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 22.09.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Մ.Դանիելյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Մկրտչյանը, Լ.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Ռ.Խաչատրյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին:
Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«ՇանսՇին» ՍՊԸ (ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տավրոս 4 փող, 2 նրբ 11/1)**
2. **«Արաման Սթուն Սթայլ» ՍՊԸ (ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Զոլաքար)**
3. **«Արթ-Կարշին» ՍՊԸ (ք. Երևան, Հ.Քոչարի փ.16/1,26)**
4. **«Սասունասար» ՍՊԸ (ք, Երևան, Ազատության նրբ. 4-րդ շենք, թիվ 75 բն,)**
5. **«ՌԱՋ ՇԻՆ» ՍՊԸ (ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Գ. Միքայելյան 69)**
6. **«Վահրադյան Շին» ՍՊԸ (ՀՀ, ք. Ստեփանավան, Չարենցի 175)**
7. **«Արտ Պլաս» ՍՊԸ (ՀՀ, Արարատի մարզ, գ. Շահումյան, Սևակի 7)**
8. **«Հիդրովերանորոգում» ՍՊԸ (ՀՀ, ք. Արարատի մարզի, ք.Մասիս, Արդյունաբերական հանգույց, Սայաթ Նովայի թիվ 32)**
9. **«ՈՍԿԵՀԱՏՇին» ՍՊԸ (ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Վաղաշապատ/Էջմիածին/)**
10. **«Նաիրիշին» ԲԲԸ (Ք. Եղվարդ արտ. Հանգույց 18/1)**
11. **«ՊրիզմաՎան» ՍՊԸ (ՀՀ, Լոռու մարզ, գ. Դարպաս, Արդյունաբերական շրջան)**
12. **«ՋԻ-ԱՐ ԲԻԿԴԻՆԳ» ՍՊԸ (ք, Երևան,Կիևյան 3, բն.27)**
13. **«ՄարտՇին» ՍՊԸ (ք, Երևան,Նորքի 2-րդ նրբ.17)**
14. **«Ռազովալո» ՍՊԸ (ք, Երևան,Պարոնյան)**
15. **«Տրանսունիվերսալ» ՓԲԸ (ք, Երևան,Զավարյան 13/1)**
16. **«Այպոշին» ՍՊԸ (ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 24/52)**
17. **«Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ (ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տարոն- 4, 53,Դ/3)**

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ **«ՌԱՋ ՇԻՆ» ՍՊԸ-ի**: ARMEPS համակարգում բացակայում է Հավելված 9 հանդիսացող տուժանքի մասին համաձայնագրի մաս կազմող վճարման պահանջագիրը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ «Ռազովալո» ՍՊԸ-ի:

«Ռազովալո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում չի պահպանվել հրավերի առաջին մասի 8.19 կետի պահանջը՝ փաստաթղթի արտատպումից հետո էլեկտրոնային թվային ստորագրությունը տեսանելի չէ:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Նախահաշվային գինն է 8500000 ՀՀ դրամ:

1-ին չափաբաժին.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/
1	«Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ	4680000*
2	«ՄարտՇին» ՍՊԸ	5000000
3	«ՇանսՇին» ՍՊԸ	5233000*
4	«Սասունասար» ՍՊԸ	6000000
5	«ՌԱԶ ՇԻՆ» ՍՊԸ	5495000
6	«Վահրադյան Շին» ՍՊԸ	6500000
7	«Արտ Պլաս» ՍՊԸ	5300000
8	«Հիդրովերանորոգում» ՍՊԸ	5265525
9	«ՈՍԿԵՀԱՏՇին» ՍՊԸ	6558430*
10	«Նաիրիշին» ԲԲԸ	6020000
11	«Պրիզմավան» ՍՊԸ	5577000
12	«ՋԻ-ԱՐ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ	5750000
13	«Արթ-Կարշին» ՍՊԸ	5250000
14	«Ռազովալո» ՍՊԸ	5700000*
15	«Տրանսունիվերսալ» ՓԲԸ	5250000

16	**«Այպոշին» ՍՊԸ**	6729200
17	**«Արաման Սթուն Սթայլ» ՍՊԸ**	6400000

*Հանդիսանում է ԱԱՀ չվճարող

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց.

1. Մերժել **«ՌԱԶ ՇԻՆ» ՍՊԸ**, **«Ռազովալո» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտերը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

2. Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝ **«Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ** -ին:

3. Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝ **«ՄարտՇին» ՍՊԸ** -ին:

4. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել Կարգի 43-րդ կետի 3-րդ, 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 11:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,

2.Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Մ.Դանիելյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Մկրտչյան

_____ Լ. Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան